84. ԹԱՔԱՎԵՐԻՆ ՊՈՒՃՈՒՐ ՓԸԵՍԱՆ

Իլալ ա, չիլալ մին թաքավեր։ Էտ թաքավերեն իլալ ա իրեք ախճիգյ։ Կուճուրը քյասիր տղու վա տվալ, էն էրկունն էլ հըրուստու։

Մին օրուշ թաքավեր եկալ ա էտ թաքավերեն թա.— Ցա քառասուն ըտժանե տոնըտ տոք, յա քառասուն տարվա հացամթերքըտ տոք, թա չէ կյամ ըմ քյըեզ յրա կռեվ։

Թաքավերը համոզվում չի՞։ Կյամ ըն կռեվ։ Կուճի ախճիգյը կյամ ա մարթին ասում. — Աղա, եր է՞, եկալ ըն կռեվ։

Մարթն ասում ա.— Ա՛խչի, անումը տամ մե՞ր, վախումը ը՞մ։

Վեր կռեվը սկսվեց, կնեգյը քյինաց հարանց տոն։ Մարթը քմակեն եր ա կենում, վեր սիմին ծիքյ չի տամ, մին թուչկան ծի էլ ա կյամ, մին ծեռք շոր էլ։ Շորերը կյենում ա, ծին եր ինում, քյինում թաքավերեն կոշտը, ասում.— Ցա զորքըտ ե՛տ տո, յըես մինակ կռեվ անիմ, յա ետ ըմ տեռնըմ։

Տղան կռեվ ա անում, հախտում, զորքը ետ տամ, կյամ նի մընում տեղը։

Կնեգյը կյամ ա տոն, տեսնում տանը, պըլլոր ա անում, թա. — Կայյե՞, կա՞, մըեռնիս տու, հանե՞, տղան էն ա է՞, եկու, հախտից, քյինաց։

Էքյսըն էլ ա կռեվ ինում։ Էլհա էտ տղան սիմին ծիքյ ա տամ, թուչկան ծին կյամ ա, եր ա ինում, քյինում, հախտում, կյամ տոն։

Կնեգյը էլհա կյամ ա, թա.— Դալուտ տափան կենա՞, տեղատ եր է՞ է՞ է՞, տղան նա յա՞, թա տո՞։

Իրեքինշի դոնումը վեր քյինաամ ա, կռեվը պրծնելու յրա ծեռքան յարալու յա տրեռնրմ։ Թաքավերը յոր ա օնում, ուրան նշնվե յըյ-լեխավը յարալու ծեռքը կապում։ Էտ տրղան կյամ ա, նի մննում տեղը։ Կնեգյը կյամ ա նի մննում տոն, մարթին խարար տամ, թա.— Ա՛ մարթ, կռեվը պրծալ ա, լհա պրծնելու յրա էն տղեն ծեռքը յարալու տեռավ, ետ քյինաց։

Էս մարթը ծեռքը տեղեն տական տուս ա օնում, կնեգյը յայ-լեխը տեսնում ա, վազ տամ հորը կոշտը։

Հարը տեսնում ա, ասում.— Պերեքյ ստեղ։

Տղան կյամ ա։ Թաքավերն ասում ա.— Ա՛յ տղա, վեր էտքան քաշ ըս, հի՞նչս ըս օղում, քյըեզ տամ։

Տղան ասում ա.— Վեչ մին պեն։ Էս քղաքումս էրկու նոքյար օնիմ, օղում ըմ տեսնամ։

Սաղ քաղաքը վրենն ըն անում, լոխճին եշում, նոքյարնին ըտեղ չըն ինում։

Թաքավերը ծեն ա տամ ուրան էրկու փսեն, ասում. — Բա՛ խե՞ տահանք ը՞ն։

Ասում ա. — Հա՛, տահանք ըն։

Թաքավերն ասում ա. — Դե վեր իտի յա, տու իմ տեղս նստե, մնա հունց վեր թաքավեր, քու բաշանաղնետ էլ նոքյարնե։ Պնուցուրու, հիշքյան քյեփրտ տամ ա՞։